Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/0229/02/24**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ ՎԱՀԱԳՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ

2024 թվականի հունվարի 17-ին (ք. Երևան)

քննարկելով <<Գլոբուս-Շին>> ՍՊԸ-ի և <<Վալ-Կար>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության՝ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից 15.12.2023թ. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի /ամբողջությամբ/ լուծելու վերաբերյալ ծանուցումն անվավեր ճանաչելու, պատասխանողից հօգուտ հայցվոր <<Գլոբուս-Շին>> ՍՊԸ-ի 3.211.870 ՀՀ դրամի չափով հայտի ապահովման գումարի բռնագանձման պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց

<<Գլոբուս-Շին>> ՍՊԸ-ն և <<Վալ-Կար>> ՍՊԸ-ն հայցադիմում են ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության՝ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից 15.12.2023թ. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի /ամբողջությամբ/ լուծելու վերաբերյալ ծանուցումն անվավեր ճանաչելու, պատասխանողից հօգուտ հայցվոր <<Գլոբուս-Շին>> ՍՊԸ-ի 3.211.870 ՀՀ դրամի չափով հայտի ապահովման գումարի բռնագանձման պահանջների մասին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. <<Գլոբուս-Շին>> ՍՊԸ-ի և <<Վալ-Կար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության՝ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կողմից 15.12.2023թ. ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7 ծածկագրով կնքված պայմանագիրը միակողմանի /ամբողջությամբ/ լուծելու վերաբերյալ ծանուցումն անվավեր ճանաչելու, պատասխանողից հօգուտ հայցվոր <<Գլոբուս-Շին>> ՍՊԸ-ի 3.211.870 ՀՀ դրամի չափով հայտի ապահովման գումարի բռնագանձման պահանջների մասին, ընդունել վարույթ:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6–րդ հոդվածով սահմանված կարգով պատասխանող ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությունից պահանջել սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում Դատարան ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-23/7 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված բոլոր ապացույցները, որոնք գտնվում են պատասխանողի տիրապետման տակ:

3. Սույն որոշումն անհապաղ ուղարկել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Վ. ԹՈՐՈՍՅԱՆ**